

ՀԱՂՈՐՂԱԳՐՈՒԹԻՒՆ

ԿԻՊՐՈՍԻ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ ԿԸ ՎԵՐԱՅԱՍՏԱՏԵ ՄԵԼԵՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ ՊԱՅՊԱՆԵԼՈՒ ԻՐ ՓԱՓԱԲԸ

Կիպրոսի կրթության նախարարը դուկտ. Անտրեաս Տիմիթրիու երկուշաբթի, 28 սեպտեմբեր 2009-ին ընդունեց Սփիւռքէն եւ Մելքոնեան սանուց միութենէն ներկայացուցիչներ, որոնց փոխանցեց կառավարութեան փափաքը՝ պահպանելու պատմական Մելքոնեան կրթական հաստատութիւնը: «Իմ եւ այս կառավարութեան մտադրութիւնն է Մելքոնեանը պահպանել. երբ դպրոց մը փակուի, ամէն ոք աւելի կ'աղքատանայ», յայտնեց կրթութեան նախարարը իրեն այցելողներուն:

Պատուիրակութիւնը նախարարին զեկուցեց Մելքոնեան Կրթական հաստատութեան եւ անոր շրջանաւարտներուն 80-ամեայ իրագործումներուն մասին, թէ ինչպէս անոնք կարելոր ներդրում ունեցած են մշակոյթի, արուեստի ու գիտութեան բնագաւառներուն մէջ, ինչպէս նաեւ սատարած են հայ զաղութներու պահպանումին՝ պատրաստելով ուսուցիչներ, առաջնորդներ եւ ազգային հասարակական գործիչներ:

Պատուիրակութիւնը նշեց նաեւ կարիքը սփիւռքի համար համահայկական երկրորդական գիշերօթիկ վարժարանի մը, ուր պահպանուին հայերէն լեզուն, հայոց պատմութիւնը եւ հայ մշակոյթը: Պատուիրակութեան անդամները նախարարը վստահեցուցին, որ աշխարհի զանազան կողմերէն, անհատներ եւ կազմակերպութիւններ, պատրաստ են հոգալու անոր նիւթական եւ այլ կարիքները:

Պատուիրակութիւնը յիշեցուց կրթութեան նախարարին, Council of Europe's of Experts-ի կողմէ հրապարակուած թելադրութիւնները՝ փոքրամասնութիւններու լեզուի պահպանման առնչութեամբ, ինչպէս նաեւ այս ուղղութեամբ Մելքոնեանի կատարած իրագործումները: Այս երկու գործօնները խթան ծառայած էին Կիպրոսի կառավարութեան՝ առնելու համապատասխան քայլեր:

Նախարարը խոստացաւ ճիգ չխնայել դպրոցին վերաբացման համար, համագործակցելով Կիպրոսի խորհրդարանի հայութեան ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեանին, Կիպրոսի համալսարանի նախագահին եւ այլ պաշտօնական անձնաւորութիւններու հետ, այս նպատակը յաջողցնելու միջոցներ փնտռելով:

«ՄԵԼԵՈՆԵԱՆ ՍԱՆՈՒՑ ԲԱՐԵԿԱՍՆԵՐ»
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ